Հրանտ Մաթևոսյան

Մի ուրացեք ձեր եղբորը

В годину смуты и разврата
Не осудите братья брата...

- Ժամանակին ասել էիք, թե եղեռնի մասին գրել չեք կարող, քանի որ անկողմնակալ լինել չեք կարող: Այսօր կարո՞ղ եք գրել դրա մասին (ինչպե՞ս եք գնահատում անպատեհ այս աղմուկը «ցեղասպանության ճանաչման» վերաբերյալ):
Լևոն Ասատրյան, «ՉԻ» լրագրող

- Նման մի բան, այո, ասել եմ, ասելուց մեկ-երկու տասնամյակ առաջ նաև արել եմ. մեր վրեժը մեզ կործանում է, մեր անցյալի բեռան տակ մեր փխրուն ուսերը փուլ են գալիս, մեն-միակ անգամ այս արև աշխարհ եկած մարդու մեր ճանապարհը խոտորվում, մոլորվում ու կորչում է: Ավելի ուշ, բելառուս Ալես Ադամովիչի և թրքահպատակ Հակոբ Մնձուրու ինքնության ու գործի հարադրմամբ, կարծեմ վատ չտեսաբանեցի, մոտավորապես այսպես. այլ է՝ երբ թիկունքդ սլավոն եղբայրներիդ ես անում և ֆաշիզմից հաշիվ պահանջում քո մոխրացած Խատինի համար, և լիովին այլ՝ երբ ապրում ես մի երկրում, ուր հերոսացնում ու արձան են կանգնեցնում քո երեխայի ու ծնողի, գյուղի ու երկրի դահիճներին:
Այսպես էր ասվում և այդուհանդերձ «սլավոն եղբայրներով», Միությամբ ու ողջ աշխարհի համակրանքով ապահովված թիկունքի եթե ոչ վստահությունը՝ գոնե վստահության հույսը կար, հայ պատմաբանը երբ «Երիտթուրքերը պատմության

դատաստանի առջև» կամ «Կիլիկիա» էր գրում՝ զորություն, զորելու մի վստահություն այնուամենայնիվ ուներ, իմպերիայի քաղաքացու ստատուսը մեզ խոսեցնում էր լիովին ուրիշ լեզվով, հիմա, ասում եք, լեզուս փոխելո՞ւ եմ, երբ տիրակալությունը անդարձ հեռացել է, երբ Ադամովիչի «Խատինը» կամ Ռոմմի «Սովորական ֆաշիզմը» բորբոքվում են հայ մարդու իմ զորության սահմաններից անդին՝ մենք մեր լեզուն փոխելո՞ւ ենք, միանգամից թրքացած այս աշխարհի առջև ա՞յլ լեզվով ու կեցվածքով ենք կանգնելու:
Խոսքս, խնդրեմ, պոետական սեթևեթանք մի համարեք, քանի որ պոետից լուրջ մարդ եթե կա և դա հայ դիվանագետը, հայ քաղաքագետը, ազգային կուսակցություններն ու ողջ հանրությունն է՝ ապա երկուսս էլ նույն պատի առջև ենք կանգնած, նույն շրջափակումի կալանքում ենք, և երկուսս էլ նույն առաջադրանքն ունենք՝ ճեղքել փարախը:
Բայց փարախը միայն մեզ համար է փարախ. նրանց համար՝ ովքեր փարախից անդին են, դեպի ուր կամ ում մենք ձգտում ենք՝ դա ամենևին էլ փարախ չէ - արյունոտ ու անարյուն հաղթանակներով սահմանված պետական սահման է: Եվ թուրքը միայն ինձ համար է չարիքի խորհրդանիշ, ես միայն ինձ համար եմ զոհի խորհրդանիշ - նրանց համար գուցե բոլորովին հակառակն է, կամ նրանք դատում են թերևս ոչ այս խորհրդանիշերով, իրենց համար նրանք թերևս չարիքի-բարիքի, վտանգի-անվտանգի, վնասի-անվնասի այլ նշաններ ունեն, փոքրի մեր անվերջ տվայտանքը նրանց գուցե հոգնեցրել է, եթե ոչ իհարկե զզվեցրել: Համոզված լինենք միայն մի բանի մեջ՝ որ պաշարողներից անդին մեր արյան ու հավատի եղբայրները չեն կամ եթե նույնիսկ են՝ խնդրի դժվարության առջև երես են դարձնելու մեզնից, անհասկացող են ձևանալու կամ անհասկանալի ենք լինելու իսկապես: Ճշմարիտ գիրքը հասու է յուրաքանչյուրիս ու բոլորիս, բոլորս ու յուրաքանչյուրս հասու ենք ճշմարիտ գրքին. եթե այդ գիրքը համարում եմ լավ գիրք եղբորս մասին, եթե գիրք եմ համարում աղջկաս մասին՝ վրիպած գիրք է. շարադրողն անազնիվ է եղել, և գիրքը նրան պատժել է՝ ծնվել է մեռած, ճիշտ ինչպես բնագետը և իր փորձը, ինչպես վարդապետությունը և հասարակությունը, որ փոխադարձ պատիժների ամբողջ պատմություններ են թողել: Ճշմարիտ գրքի պես, բնագիտական խնդրի հստակությամբ, հասարակությունից քաղված ու հասարակությանը դարձվող վարդապետության պես՝ մեր վարքն ու ցեղասպանության մեր քաղաքականությունը պետք է կառուցվեն նախ և միայն ազնվության հիմքի վրա, ազնվություն նախ և միայն

խնդրո առարկայի հանդեպ, ազնվություն մի տեսակ ինքը իր մեջ, ինքը իր համար, և այդ դեպքում ճեղքած կլինենք փարախը, հասկանալի կլինենք յուրաքանչյուրին ու բոլորին: Մի քիչ խարդախում, մի փոքր անճշտություն, բազում անհայտներով այդ հավասարման մեջ որևէ անհայտի բացթողում, և խնդիրը մեզ կպատժի, ինքը իրեն խնդիրը կպատժի:
Թուրքը, ոչ, չի ճանաչելու ցեղասպանությունը, չի ընդունելու՝ թե ինքը ցեղասպան է, նրա կոմունիստը չի ընդունել - նրա ազգայնականը չի ընդունելու. ես ամեն առավոտ ծանր չկամությամբ եմ կանգնում պահանջատիրոջ իմ օրվա դեմ - նա՝ նրա քաղաքագետը, պոետը, ուսանողը, դիվանագետը՝ ինչու էր իր համար հոգս դարձնելու իր մեծ ցեղի յուրաքանչյուր անդամին հիշեցնել՝ թե սա մեղքի ու պարտքերի մեջ խրված է. թուրքը իր հողը չի բաժանելու, իր ամբողջը չի կոտորակելու: Ուրեմն արժե՞ ջանք ու քրտինք թափել մի քարի վրա՝ որ չի ճաքելու և հակառակը՝ մեզ է ճաքեցնելու, բռնած գնալ ու գնալ մի բավիղով՝ որ ելքի նշան չի նշում: Չարժե, բայց չենք կարող չգնալ, ջանք ու քրտինք չենք կարող չթափել: Մի բան ստույգ կարող ենք - մտածել մեր երեխաների մասին և չխելագարվել, ասել է՝ մեզ չափի բերել, մեզ մեր չափին բերել, տեղավորել մեզ բանականության սահմաններում, Աստծո օրվա առջև ետ քաշել սև վարագույրը մեր երեխաների դեմից, ողբի ու տառապանքի պատ չկապել ողջ հանրության ու յուրաքանչյուր անհատի շուրջը, միևնույն է, նրանք գլուխներն այդ պատին ծեծելով չէ որ ապրում են, նրանք երգի ու օրհներգի իրենց օրվա մեջ ոխն ու ողբը մի համեստ անկյունում ծվարած են տեսնում:
Այսքանը ահա կարող ենք, և այսքանը քիչ չէ, բայց այսքանի առջև վրիպելը ներելի չէ, այնինչ վրիպում ենք, դարձյալ վրիպում ենք:
Խոսքն այստեղ թշնամուց կորզելիք մեր օգուտների մասին չէ և թշնամուն պատճառելիք մեր վնասների մասին չէ և ոչ անգամ դեպի արևելք նրա երթը խոչընդոտելու մասին - մեր իսկ հանդեպ մեր պահվածքի մասին է խոսքը. ցեղովի խոսում ու գործում ենք հանուն ցեղասպանության ճանաչման, ցեղի մեծուփոքրով ծնկի ենք եկել մեր անթաղ մեռելների վրա և չենք տեսնում՝ որ հենց ցեղն ենք մսխում - ցեղի կարողությունն ու կենդանի շունչը. արդարությամբ ու Աստծով խոկում և հատուցումն ու պահանջատիրություն ենք հուսում և չենք տեսնում՝ որ սպառվում է ինքը պահանջատերը:
Պետք է մտածեինք պահանջատիրոջ մասին և ոչ պահանջատիրության: Պետք է սիրեինք այս Հայրենիքը, հոգայինք այսօրվա հոգսը: Այլապես, հնարավոր է,

վաղը պահանջատիրությունը բավարարվի՝ մեջտեղը պահանջատեր չլինի, մանավանդ որ այսպես մի անգամ արդեն եղել է. ձեզ Երզնկայից Շուշի երկիր ենք տալիս, բայց ժողովուրդ չունեք:

- Խնդրում եմ, տվեք «մտավորականի» Ձեր սահմանումը և ասացեք, Ձեր կարծիքով, մենք, որպես այդպիսին, մտավորականներ ունե՞նք, թե ոչ: Ձեր կարծիքը ժամանակակից մտավորականների մասին: Եվ՝ կարելի՞ է մտավորական անվանել այն մարդկանց, ովքեր «Պապլավոկի» սպանությանն ականատես էին ու լռում էին ճշմարտության մասին:
Նաիրա Մամիկոնյան, լրագրող, «Առավոտ»

- Մտավորականությունը որպես մեր հոգևոր կյանքի ու վարքի էական բաղադրիչ, հատկանիշ, որակ, և մտավորականությունը որպես կաստա, խավ, նախընտրելի է՝ վերնախավ, որ իրենով չափանիշ է մարմնավորում, դեմք ու դիմագիծ է տալիս իր ժամանակին, իշխանությունն ու հասարակությունը իր առջև հաշվետվության մեջ է պահում. լայն ազգային-պետական կյանքի բացակայությամբ՝ երկրորդը մենք երբեք չենք ունեցել, և հիմա երկրի իրական տիրոջ, անթագ թագավորի նրա փառահեղ կերպարը ես և Դուք մեր տվայտանքի աշխարհ ենք բերում Ռուսիայից, Գերմանիայից, Սկանդինավներից՝ ոչ մեր անցյալից, կամ, որպեսզի մեր անցյալը շատ էլ աղքատ չերևա, ասենք՝ արդեն-արդեն ունենում էինք այդ մտավորականությունը՝ եղեռնը և հեղափոխությունը երկիրը տակնուվրայեցին, արդեն-արդեն կար այդ մտավորականությունը՝ 88-ը եղավ:
Չերչիլն ասում էր՝ ազնվականությունը իր արյունով Լամանշը կլերդացնի ու թշնամու ոտքը Բրիտանիա չի թողնի: Ցավալի է իհարկե, որ մենք այդ խավը, այդ վերնախավը այդպես՝ իր արյունով հայրենիք սահմանող, իր վարքով երկիրը սահմանադրող, մտավորականության այդ խավը չունենք ու չենք ունեցել, ավելի ցավոտը սակայն մարդկային այդ ազնիվ ու ազնվական որակի անկումն է, այդ հատկանիշի նահանջը, որ ամենքիս ու յուրաքանչյուրիս անկապտելի բաղադրիչն էր լինելու, որ հարյուրավոր բերաններով հազար-հազար գիշերներ դյուցազներգություն է վիպել, և մի անգամ մի տեղ մի անպարկեշտ բառ չի սպրդել, որ չափ է դրել մեր գործին ու խոսքին և բնազանցից ու չափազանցից խորշել որպես իրական բորից: Այդ երկյուղած չափավորությունը, չափավորի

հանդեպ այդ անպայմանադիր պարտավորվածությունը մեզ ստիպում էր նկատել, թե գուցե հարկ չկա մեր ազնվականությանը փնտրել արյունով լերդացած նեղուցներում - մեր մտավորականությունն ու մտավորականը գուցե թե հենց հայ մարդն է, հայ գյուղացին՝ իմ հայրը, իմ պապը, որ այս անտեր աշխարհում իր տան և՛ տերն էր, և՛ մշակը, այս անթագ-անիշխան երկրի և՛ իշխանն էր, և՛ չոբանը:

Չգիտեմ, իմ ժամանակ, ասենք, իմ ներկայությամբ «Պապլավոկի» պատահարը բռնկվել է - մտավորից ու մտավորականությունից հեռու նրանց ներկայությամբ չէր բռնկվի. Սոս Սարգսյանի, ասենք, ներկայությամբ վարկաբեկիչ այդ խայտառակությունը ծավալվել ու ճայթել է - հոր ու պապերի ներկայությամբ հանդուրժումի ու զրույցի այլ երեկո կլիներ. Իսահակյանն ու Դեմիրճյանը, ասենք, ներկա լինեին՝ դեմ-դիմաց մի սեղանի նստած, կզակները ձեռքներին, այո՞, ձեռքները ցուպերի գլուխներին... և սրահի ջերմությունը՝ կիրթ, զուսպ, կարգավոր, և սաքսաֆոնի ու դաշնամուրի համերաշխ զրույցը, այո՞, որովհետև հանրապետության նախագահը ներկա է...

Չգիտեմ, բարեկիրթ մարդու այս վտարումը մեզնից յուրաքանչյուրից, միմյանց սահմանների այս ոտնահարումը, այս որպես թե տնավարի, բայց իսկապես բռի ներխուժումը միմյանց սահմաններ - իհարկե ճոթռաբերան խեղճություն էր դառնալու և դառնալու էր բռի ցածրություն, ցածր բռիություն՝ գավառական ակումբի ներկայացում դարձնելով իշխանազանցության ու մարդասպանության իրական դրաման: «Տղերքը հարբած էին եղել, կառքը կանգնեցրել էին - մինիստրի կառքը... կառքից իջեցրել էին ու երեսին թքել... դե հարբածին ի՞նչ մինիստր... Դրոն էլ կանչել էր միլիցատուն, խաբել էր, թե կների - կոնակից խփել էր հարբած մեկի ներկայությամբ»: Ես և Դուք նշանավոր խմբապետի հետ մեր «Պապլավոկին» վա՜յ հարամզադեք ասենք ու անցնենք: Թե՞ Դուք «Ճանապարհի» Ձամպանոյին հիշեցիք՝ եզնաշղթա փրթող վայրենի ուժի թանձր ու անթափանց մի անասունի, որ ծիծաղելի է կատակաբանի ու պոետի համար, որն էլ իր հերթին անհասկանալի ավելորդություն է թանձրամիտ անասունի համար:

- Ռոստոմ ունեցա՞վ այս երկիրը: Կունենա՞: Թե՞ կենտ ձիավորի սիրտը անվերադարձ է ճաքել, ու մենք հատնում ենք:

Լիզա Ճաղարյան, լրագրող

- Վանոն չէ՞ր, Վազգենը չէ՞ր... թե՞ ուշքներս դարձյալ Վարդանանց

ժամանակների կարմիր մշուշներին ու Ճենաց աշխարհներին ենք պահելու, որտեղից խարդավանքի ու արյան հոտը, ապահով լինենք, չի խփի մեր ռունգներին: Իսկ գիտեի՞նք, որ կլինեն: Ես, օրինակ, վստահ չէի. ես ասում էի բանակ՝ և թուրքի կամ ռուսի բանակ էի տեսնում, հաղթանակ էի ասում՝ հաղթակամարն այլ հորիզոններում էր կանգնում, ասում էի նախարար ու սպարապետ - սպարապետը ձիու վրա դանթում էր Ռշտունիքի հեռավոր գիշերներում, «նախարարը» գրչագրի ձեռքի տակ լմանվում էր հնօրյա մագաղաթին: Վանոյի ու Վազգենի կենդանի հասակներն այնինչ, ժամը ժամի վրա բարձրանալով ու ամրանալով, հաստատվում էին մեր օրերում, մեզանում: Եվ հիմա, մեր օրվա առջև այդ կուրությունը, հայացքի այդ անզորությունը, մոտիկն ամայացնելու և հեռուն ծաղկեցնելու այդ մեղքը իզուր էլ ինձ եմ առնում. սրբությունները սրբություն, բայց ես միշտ վերապահությամբ եմ նայել անցյալին և վստահությամբ՝ ներկային. մի շեն օջախը ինձ համար ավելի է սրբատեղի՝ թեկուզև իր դուռն իմ առջև փակ լինի, քան մի որևէ սբ. Կարապետ՝ թեկուզ դռներն իմ առջև բաց. 89-ի՞ն, 90-ի՞ն աբովյանցի մի երեխա էր կորել, համարենք պատանի, ծնողների տագնապը ռադիոն շաբաթներով մաղում էր, հետո կարծես լսեցի թե տղան գտնվել է, կարծեմ Ղարաբաղ կամ Ղարաբաղի ճամփին. ինձ համար՝ կեցցե անանուն այդ երեխան և ոչ անգամ Նժդեհը:
Ոչ մի գեղ ու ցեղ իրեն անՌոստոմ չի թողել, սպասենք, ստեղծենք, կանչենք, մի քիչ էլ ինքներս լինենք՝ և կգա կամ արդեն եկել է, մեր մեջ է:

- Եթե վաղը պատերազմ սկսվի, ճակատ մեկնողներին ի՞նչ խոսքեր կուղղեք:
Արմեն Բաղդասարյան, քաղաքական մեկնաբան

- Միայն հաղթանակ, ասելու եմ. պարտությունը պառավ ջադու է դառնալու կպչի թիկունքիդ, ինչ կողմի վրա ուր էլ գնաս՝ վրացին, ռուսը, չեչենը, հույնը, պարսիկը, մինչև իսկ թուրքը՝ ջահել մարդ ես՝ չե՞ս ամաչում, էդ ինչ ես շալակել, ասելու են, կի՞նդ է, եկեղեցով հետը պսակված ես, չե՞ս կարողանում բաժանվել, թե՞ մայրդ է, ինքն է քեզ բերել՝ պարտավոր ես. գցիր, ասելու եմ, շան լակոտ, խայտառակ սկսել ես՝ խայտառակ էլ փակո՞ւմ ես ցեղիդ պատմությունը. միա՛յն հաղթանակ, և կյանքդ նժույգ է դառնալու՝ քեզ իր թամբին առնի, և բոլոր կողմերիդ վրա հորիզոններ են բացվելու և քո ընթացքի ճանապարհին քեզ համակիր սիրով են ողջունելու վրացին, ռուսը, չեչենը, հույնը, պարսիկը, մինչև իսկ թշնամիդ. միայն

հաղթանակ, ասելու եմ. պարտությունն էլ, հաղթանակն էլ՝ երկուսն էլ մարդուց են, ինքը մարդն են, հաղթանակը ճառագող մարդն է, պարտությունը՝ մթնած մարդը, քո խավարումները քո նախնին արդեն խավարել է, մթնելու տեղ դու այլևս չունես, քո սևերն արդեն քո նախնին հագել մաշել է, մի անգամ քո կարմիրը հագնելո՞ւ ես. քեզ միայն հաղթանակ է տրված, մարդ եղիր քո առաջ՝ և ձիավորվիր:
- Ինչո՞ւ ենք մենք այսքան չար:
Սամվել Մկրտչյան, թարգմանիչ

- Քո Սարյա՞նն է չար, Կոմիտա՞սը, Չարե՞նցը, Թումանյա՞նը, Մյասնիկյա՞նը, Գարեգին Նժդե՞հը... մեր փոքրիշատե արտահայտված ո՞ր անհատն է իրենով չարություն նշում. ընդհակառակը՝ նրանց բոլորին հատկանշում է մի բան, որ ինձ աստվածաշնչյան Առակավոր որդուն է հիշեցնում. կարելի է, չէ՞, Առակավոր ասել Անառակի եղբորը՝ որ իրեն վայելքների ու արկածների չի տվել, չի հարաբերվել խոյանքի ու անկման սահմաններին, չի մսխել ու մսխվել, հոր կորուստների ու կարոտների աշխարհ չի մտել, և այլն, այլ լռիկ ու անանուն միշտ ներկա ու ներկայությամբ հոր կարոտների աշխարհից բացակա՝ հանդից տուն, տնից հանդ ճանապարհին է, հոր տունը պահում է: Մեր ամբողջ հաջողվածը իսկապես գալիս է Առակավորի այդ դիմապատկերին:
Մնացյալիս և զանգվածի մասի՞ն է խոսքը, նրանց՝ ովքեր օրավուր բարձրացող Սարյանի շուրջը գազազում էին, Չարենցին կերան, Կոմիտասին այստեղից արտաքսեցին, Թումանյանի դեմ հարյուրներով հոդվածներ ու մատնագրեր... և այլն, և նրա՞նց՝ ում ժողովուրդ ենք ասում: Դա չարություն չէ, դա խեղճություն է, անկարություն. Կորտասարի պատմվածքի սաքսաֆոնահարը գազազում ու գործիքը ջարդում է այն պահին, երբ իրեն թվում էր, թե նվագով ահա-ահա գաղտնիքների վերին ոլորտ, խորհրդավոր ինչ-որ շքեղ ապարանք է մտնում, բայց վերջին պահին հենց քթի տակ դռները փակեցին: Դա, ահա, մերժվածի դառնություն է, Թումանյանը դառնացած էր ասում և պատճառաբանում էր ոտնակոխ տրորվածի Հայոց մեր պատմությամբ, ես անկարություն եմ ասում: Անկարություն՝ նկարչին Սարյանի աշխարհ ընկնելու, բանաստեղծին՝ Չարենցի, գիտնականին՝ Համբարձումյանի, բանվորին՝ բարձր արտադրողականության, գյուղացուն՝ ծավալուն ու ծփուն մեծ ֆերմաների ու նախիրների, և այլն. դրանք թերևս տարբեր աշխարհներ չեն՝ հաջողվածների ու բավարարվածների մեկ և

նույն շքեղ աշխարհն է, շուրջը՝ մերժված-դառնացածներիս աշխարհը:
Մի քիչ ավելի ծարավի լինել, քան մենք ենք, օժտվելու տարիքում մեզ մի քիչ ավելի օժտել, համայնքին այսքան չապավինել, տկարությունն այսքան չհանդուրժել՝ ինչքան մենք ենք ապավինում և հանդուրժում ու հանդուրժվում, մի հրեայի, մի գերմանացու չափ աշխատել մեր միավորի, մեր երեխայի վրա... ապա՝ երկու օրվա հաց ու երկօրյա ընթացքի հեռանկար, և դու տես, թե քո չարը, իմ անկարը, Թումանյանի դառնացածը աչքներիս առջև ինչպես է դառնում աշխարհիս ամենաբարի, ամենասիրելի ժողովուրդը. երկու օրվա հաց, երկօրյա ընթացքի հեռանկար՝ և ի՜նչ հիանալի ժողովուրդ բարձրացավ քսանականների իսկապես դառը ժամանակից՝ իմ ծնողների ժողովուրդը. մի քիչ ջանք ինքներս մեզ վրա և ընթացքի երկօրյա հեռանկար կամ հեռանկարի թեկուզ պատրանք՝ և տես թե ինչ շիտակ, արդարամիտ, ինչ քաջ ժողովուրդ է բարձրանալու՝ իմ որդիների ժողովուրդը:

- Վերջերս իտալացի մի դիվանագետ էր եկել Հայաստան, որ գնաց իր հայրենիք ու գրեց. «Գնացի ու տեսա մի ժողովուրդ, որը ինքը իրենից է երես թեքել»:
Համաձա՞յն եք այդ օտարի հետ:
Նաիրա Զոհրաբյան, լրագրող

- Տոլստոյն, ասում են, լավ չարանում էր՝ երբ ամեն առիթով «ողբերգություն» էին ասում. ռուսական տորմիոը՝ Ցուսիմա՝ մինչև վերջին նավը խորտակվել է՝ «տրագեդիա». ռուս ազգայնականները՝ Տուլա՝ հրեաների խանութները տակնուվրա են արել՝ «տրագեդիա». ցարի թագադրության ժողովրդական ճաշկերույթի բացօթյա հանդեսին հազար մարդ ոտնատակ խեղդվել է՝ «տրագեդիա»... դիվոտում ու ծամածռվում էր՝ «տրագեեեեդիա, տրագեեեդիա», ի՜նչ գրողի տարած տրագեդիա՝ երբ դրանք սովորական ապիկարություն, հեղափոխական խառնակչություն ու փնթի խեղճություն են. թող մի քիչ կարգին լինեին՝ չէին կործանվի, չէին ջարդվի, հրմշտոցի մեջ չէին խեղդվի:
Ողբերգությունն այն է, որ չի ընդգրկվում և չի կաշկանդվում, կամքիդ ու ջանքիդ հակառակ՝ ծավալվում ու իր համար գնում ու քեզ էլ իր հետ տանում է:
Բայց մերը հիմա իսկապես ողբերգություն է՝ հետադարձ հայացքիդ առջև այսքան տարի հետո սկիզբն ու սկսողներին չբացահայտող, տասնամյակների հեռուներում վերջը չնշմարող: Ինչ է լինում, ինչ է լինելու՝ ես չգիտեմ: Օգտվեմ

Բերգմանի օրինակից. նա այնտեղ արվեստի մասին է ասում, մենք երկրի, հայրենիքի մասին կարդանք. ասում է՝ արվեստն այլևս էն հին ֆշշան, գալարուն, կծան, գեղեցկուհի իժը չէ - վաղուց սատկած, մեջը մրջյուններից կերված, մրջյունների եռուզեռից շարժվող ու գալարի պատրանք տվող հին իժի պարապ պարկն է արվեստը, ներսի այդ մրջյուններից մեկն էլ ես եմ, ասում է:
Մենք էլ, ահա, մեր ողբերգության կամա-ակամա մասնակիցն ենք, ներսում ամեն մեկս իր փայը ժրաջանորեն կրծում է և ամբողջը չի տեսնում - գլուխը կախ իր համար մենա՛կ, կուսակցություններո՛վ, թայֆաներո՛վ, մաֆիաներո՛վ... վաստակի, զոհի, արյան առևտրո՛վ, զուտ զորբայությա՛մբ, իրարու բերանից հաց խլելով, իրարու ծնող լացեցնելով... - միջուկի մեր կրծոցին ենք և ամբողջը չենք տեսնում, ամբողջը տեսնելու համար քո իտալացու նման պետք է դրսեցի լինեինք:
Այդ կուսակցությունների, ձեռներեցների և այլն և ուրիշների հաջողությունները պետք է որ ազգի, ասել է՝ մեր բոլորիս հաջողությունը լինեին. ապարանքներ են բարձրացել, կուտակումներ են եղել, կուսակցություններ ու խմբեր են ձևի եկել և այլն: Բայց ամբողջ անհեթեթությունն այն է, որ ամբողջը դրանից չի ուժեղացել, ամբողջը որպես այդպիսին դադարել է լինելուց, որ ամբողջի մասերը այլևս միմյանց չեն պատկանում, մենք այլևս չենք պատկանում միմյանց:
Միմյանց դեմ տարած փայլուն հաղթանակներով ասպարեզում մի ծվատված երկիր ենք թողել՝ որ մեզ որպես խորթերի է նայում և մենք էլ իրեն՝ որպես օտարի: Որպեսզի այդպես չլիներ, որպեսզի մենք բոլորս գտնեինք միմյանց, միմյանց պատկանեինք... Բայց դա չի եղել ու չի լինի. Վազգենը նրա համար չի սպանվել՝ որ միմյանց հայացքներում դարձյալ հայրենիք կարդանք. Դեմիրճյանը, Տեր-Պետրոսյանը, Սիրադեղյանը ասպարեզից նրա համար չեն քշվել՝ որ ասպարեզում դարձյալ բոլորիս հայրենիքը լիներ և մենք բոլորս իր որդիները լինեինք:

- Ելնում եմ Ձեր՝ 27-ի սցենարը մենք բոլորս ենք գրել, արյունռուշտ մթնոլորտի ծնունդ էր Նաիրին, 27-ը պարպե՞ց այդ մթնոլորտը, թե՞ այն շարունակվում է:
Աննա Իսրայելյան, «Առավոտ»

- Հարցիդ պատասխանել փորձեմ թուրքերի պատմությունից վերցված օրինակով. եթե կօգնի՝ լավ, եթե թրքաբար ինչպես միշտ կենենգի՝ որպես ինքնին փաստ

սեփականություն կդառնա գոնե մի քիչ լայն շրջանակի: 1912-13-ի մի տարվա մեջ թուրքերը բալկանյան երկու պատերազմ են ունեցել ու երկուսում էլ շատ արագ պարտվել. երկրորդ պատերազմին, երբ հունաբալկանյան ուժերը բոլոր կողմերից օղակել էին և Սալոնիկը պիտի ընկներ՝ թուրքերի համար շատ կարևոր այդ նավահանգիստը, թուրքերի Սանկտ-Պետերբուրգը՝ իրենց կարծեմ միակ հածանավը երիտթուրքերը ուղարկեցին ոչ թե քաղաքի պաշտպանությունն ուժեղացնելու, այլ քաղաքից հանելու իրենց աքսորյալին՝ իրենց գահընկեց Աբդուլ Համիդին՝ իրենց թշնամուն, ում դեմ երեսուն տարի արյունոտ կռվի մեջ էին եղել և չորս տարի առաջ թախտընկեց էին արել, ով երկու տարի առաջ հակահեղափոխության ծանր ալիքով խփել ու գրեթե կործանել էր Պոլիսը: Ահա այս սուլթանին՝ ընտանյոք՝ օղակը ճեղքեցին ու Սալոնիկից հանեցին: Իրենց թշնամին չպետք է իրենց հակառակորդի ձեռքն ընկներ, իրենց աքսորած սուլթանը հիմա էլ հակառակորդի գերին չէր լինելու - երկրի ապահով խորքերում՝ Բուրսա՝ պետք է մարդու իր մնացյալ տարիներն ապրեր, գահընկեցի իր դավերը որոճար, սուլթանի իր չարությունը պոռթկար՝ թե ապիկար հիմարները ո՞ր հանդգնությամբ դրախտային Սալոնիկը հույն անարժանին թողեցին, նաև, կարծում եմ՝ թաքուն ուրախանար Էնվերի պետական խորամտության վրա՝ որ իրեն պետության գործերից հեռացվածին չհանձնեց Թուրքիայի թշնամիների ձեռքը, Թուրքիայի թշնամուն չզորացրեց իրենով՝ գահընկեց սուլթանով. իր ռևանշի ծանրակշիռ հնարավորությունը, իր վրեժի ու հնարավոր ռևանշի գործոնը չներառվեց թշնամական ուժերի զորանոց:
Ահա թրքաբար նենգվեց: Իսկ ես ուզում էի տեսած ու հասկացած լինել միայն, որ երիտթուրքերն իրենց թեկուզ գահընկեց սուլթանին, որ իշխանական կառքի ճանապարհին ծանր քար էր ու պետական գանձարանի վրա ավելորդ ծանրություն, թշնամական գերության չեն քշել, չեն դարձրել վտարանդի: Բայց՝ ոչինչ. երկու ելքն էլ հանում են ազգային պատվախնդրության և իշխանական խորամիտ հաշվարկների մի ոլորտ, որ մեզնից անըմբռնելիորեն հեռու է:
Մերն այդ չէ, մենք այդ չենք: Մերը - հալածյալներս և հալածողներս մեր գլուխներից վերև չունենք մեր Թուրքիան, նրա հպատակները չենք, նրա սաստից չենք երկյուղում և նրա սիրուց չենք մարդանում: Մեր հալածելը մինչև վերջ՝ մինչև փակուղի՝ մինչև ոչնչացումն՝ մինչև «հագարացվոց ճամբարն» է լինելու և մեր հալածվելը՝ փակուղում միայն ժանիքավորվելը, փակուղում միայն եղջյուրը թուր դարձրած շրջվելը՝ «հագարացվոց բանակի» գլուխն անցած: Հնազանդվել

չկա, բանակցել չկա, խաղ ու խաղացկունություն չկա - մտքի՞ տկարություն է, լեզվի՞ տկարություն՝ որ բացատրելի է մոտավորապես այսպես. իշխող ազգային վերնախավի դարավոր բացակայությունը հետնորդներիս զրկել է թշնամության-բարեկամության իշխանական և՛ վարքից, և՛ լեզվից. բացատրելի է, բայց ազգային արատ է, որովհետև ինչ վերջանալու էր լեզվակռվով, վերջանում է արյունով: Թումանյանն ասում էր՝ «Խոսք եք կռվացրել, արյուն հո չարիք»: Ահա այս «խոսք կռվացնելու» մեծ շնորհքի բացակայությունը...
Ֆոլքների պատմվածքը հիշեցի. որպեսզի անարգվածի և անարգողի «դեպքը» իր ցեղի ներսում սրանցից մեկնումեկի արյունով չկնքվի, ցեղապետը մեջտեղ մարտական աքաղաղների կռիվ է դնում, և որպեսզի հանուն արդարության հաղթի միայն ու միայն անարգվածը, ցեղապետը անարգողի մարտաքաղաղի դեմ հանել է տալիս իր աքաղաղը. մի տեսնես սրա ամեն մի խոցումի հետ ինչ ճիչ է ճչում անարգվածը, մյուսի տապալվելու հետ ինչ ցնծություն է ցնծում, մի տեսնես ինչ պար է պարում անշունչ թռչունի վրա. պիտի պարի, տրորի, ճխլի, տափակի, գետնի հետ կորցնի, ոչ եղել է, ոչ կա, իսկ ինքն ահա կա՝ քրտնած, հաղթական, ոխը բավարարած:
Մերը - շնչի ծանրությո՞ւն ասեմ, մարդու և հանրության մեր իրոք ծանր բեռը թեթև սրտով քաշելու, «մեր ցավը հարավ քամուն տալու» ճիգի բացակայությո՞ւն, թե՞ ինչ-որ չկամություն՝ պոկել ինքը իրեն, մեր որոշ բարբառներ դեռ ինքը զինքն են ասում, ազատել ինքը զինքը իրենից զատ բոլոր մյուսներին նվաստացնելու, հաղթող թագավորի իր ոտքը բերելու ոչ ամենևին արքայական ամբարտավանությունից: Չկարողացավ հաղթել, չկարողացավ իր ոտքը բերել - մյուսի ինքնին ներկայությունը չի հանդուրժելու՝ ոչնչացնելու է: Չկարողացավ հնազանդվել, չկարողացավ բանակցել - լռելու ու լուռ ոխակալելու է:
Թումանյանը մեր այդ բաց ամբարտավանությունը և նույնքան ասիական ոխակալությունը «ախտ» էր խարանում՝ վրիժառության ախտ. «Ավելի ևս զզվելին այն է, որ մեր մարդը սիրում է իր վրեժը լուծել ու հարվածը տալ ուրիշի ձեռքով՝ ինքը միշտ մութի մեջ»:
Թուրքը մի լավ խոսք ունի. «Ճամփորդը ճամփին կլինի»: Հոկտեմբերի 27-ի ազգային աղետը 29-ին պետք է բացահայտած, փակած, կնքած, պատմությանը հանձնած և մենք արդեն երեք տարի հոգով աղքատների մեր ճանապարհին լինեինք՝ ջհանդամը թե մեր նույն երթի մեջ ունենալով մեղավոր ու անմեղ բոլորիս՝ դավադիրների և անտեղյակների, աղետի ահռելիության առջև

շփոթահարների և մարդկային մեր որակը թաքուն զննողների: Դա իհարկե ինքնախաբեություն կլիներ, բայց կաթվածահարող բաներ կան, որոնց առջև առանց հանրությունների ինքնախաբեության անհնար է չշաղվել. օրինակ, հայոց զուլումի մեղքը թուրք հանրային միտքը տեղավորեց ժամանակի կառավարող կուսակցության մի նեղ շրջանակում և ինքը իր երթին մնաց. օրինակ, Երկրորդ համաշխարհայինի գեհենը գերման ժողովուրդը կցեց իր մի երկու խելագարին և ինքը իր ապաքինմանը կացավ. արյան ու մատնության ամբողջ տասնամյակներից մեր Նիկիտա Խրուշչովը մի կենտ 37 վերցրեց և մտավոր ու մարմնավոր սպանդի ամբողջ բանակներից՝ մի երկու գեներալի, մնացյալ երկու հարյուր միլիոնս մնալու էինք մեր տասնամյակների շքերթին: Շտկումները՝ հընթացս, ուղղումները՝ ճանապարհին, վիճարկումներն ու սակարկումները՝ հետո, մեղքի ու ապաշավանքի տվայտանքը՝ ժամանակի հետ, սերունդների հետ: Բոլոր երեք դեպքում էլ, բոլոր երեսուներեք ու երեք հարյուր երեսուներեք դեպքերում էլ հանրությունը չի տրոհվել, չի բզկտվել, ինքը իրեն չի գամել մեղքին ու մեղքի ժամանակին, ինքը իր աչքից չի ընկել - պահպանել է իր միության ու ընթացքի արժանապատվությունը:

Ձեր հարցին ես կարող էի պատասխանել այսպես. «Մթնոլորտը, ոչ, չի պարպվել. դեռ դարաններ են սքողվում, դեռ դղյակներ են հօդս ցնդելու, դեռ արյունոտ հաշվեհարդարներ են լինելու, Հայն ու Հայը, Հայն ու Հայաստանը դեռ անցնելիք ճանապարհ ունեն իրարից հեռանալու», մանավանդ որ Վանոն տարիներ առաջ նետել է. «Սեփականաշնորհման դաշտը մեզանում ականապատված է», իսկ ինչ Վանոն է իր նման կարճուկտրուկ ասել՝ քարին գրելիք ճշմարտություններ են: Կամ կպատասխանեի այսպես. «Ոչ պառլամենտում, ոչ այլուր ոչ մի պայթյուն չի լինելու. պահակություններն ուժեղացնելու, դարպասները գոցելու ու դժգոհ վնգստացողներին դրսերում թողած՝ բեկի իրենց հանգիստ մրափին են լինելու»: Եվ երկու դեպքում էլ Դուք դժգոհ չէիք մնա, քանի որ երկու դեպքում էլ մեր գալիք իրականությունից ներառված կլինեին բավական շատ դեպքեր ու դեմքեր:

Բայց բանն այն է, որ մեզանում կաթվածահարվել է հենց ինքը մթնոլորտը. առաջամարտիկն արդեն ճանապարհը բացել է, և շատ հնարավոր է, որ վաղը ոմն մի ապուշ հանուն նույն առաջընթացի կրկնի ու երրորդի նրան, բայց այդ աղետների որոտը այլևս չի գլորվի մեր համազգային երկնքով մեկ, համազգային միասնական մեր մարմինը այլևս չի փշաքաղվի, այդ կրակահերթերը կլինեն մեր

համազգայնորեն մեռած մարմնին, այդ պայթյունները մեզ համար կինչեն որպես հեռավոր մի երկրում եղած կամ չեղած քստմնելի պատահարի լուր: Օտար երկի՞ր, անօդ տարածությո՞ւն՝ ուր իրողություններն ու իրերը լողում են իրենց կշիռն ու նշանակությունը կորցրած, թե՞ լուսնային ինչ-որ լանդշաֆտ՝ ուր ձայն ես տալիս և քո ձայնը չես լսում, հոկտեմբերի 27-ով ահա այս Հայաստանը գտան 27-ի զորավարները, 27-ից հետո ահա այս դարձանք մենք և երկիրը:
27-ին դեռ տանելի էր. աշխարհի պատմության մեջ չեղած և միայն սև մոձավանջով լեցուն գլուխներում եղած նախճիր էր, բայց կարելի էր ինքնախաբեությամբ զուգահեռներ անցկացնել՝ թե ահա այսինչ երկրներում էլ այս, այս, այս է եղել, և դրանով մխիթարվել. բայց այն՝ ինչ կատարվեց այս երեք տարվա մեջ, այն անվերականգնելի կորուստը՝ որ շերտ առ շերտ թափվեց ազգային մեր դիմապատկերից, ազգային ընդհանրական դիմապատկերի այն աղտոտումը՝ որ շերտերով ու ծալքերով մարդ առ մարդ փակչեց մեզ բոլորիս և քանի՛ տասնամյակում քանի՛ Սարյան ու Կոմիտաս ու Թումանյան ու Աբովյան ու Չարենց են ջանքով ու տանջանքով մաքրելու... այս կորուստն ահա՝ ինքնիշխանության այս վարկաբեկումը պատմությունը մեզ չի ներելու, ինչպես որ երկրաշարժը չներեց մեր կառույցների կեղծիքը:
- Ժամանակին ասել էիք, որ եթե մարդկությունը ինչ-ինչ պատճառներով կորցնի բարոյականությունը, այն կարելի է վերականգնել «Ծմակուտի» բնակիչների կենսակերպով: Ծմակուտի բնակիչները գրականության մեջ են, իսկ իրական կյանքում ո՞ւմ կերպարով է կարելի վերականգնել կորցրած բարոյականությունը:
Տիգրան Հակոբյան, - նախկին լրագրող

- Իրենից կայսրից ու սրա բարձրաշխարհիկներից խորշանքով երես դարձրած շատ հեռանկարային երիտասարդ սպային Տոլստոյն ուղարկում է մանկության աշխարհ, ուր սա զարմուհի ունի՝ կարծեմ հորաքրոջ աղջիկ՝ աղջնակ՝ որ միմյանց հանդեպ տածվող ուրիշների ատելության մեջ ինքն էր դողում, որ իրեն ծիծաղելի էր դարձնում, օրինակ՝ ցամաք գետնին լող-տալ էր ձևացնում, որպեսզի թշնամանքից հողագունած զարմիկների երեսներին ժպիտ հայտնվի: Մահից առաջ Տոլստոյի իր փախուստը նույնպես դեպի երիտասարդություն էր՝ դեպի կազակներ ու Կովկաս, և այդ ճանապարհին էլ մեռավ: Թումանյանն իրեն մեր լեգենդներին ու զրույցներին էր տալիս, Հեմինգուեյը՝ Աֆրիկային:
Դու իմ այդ փախուստը հիմա կանխում ես և լավ ես անում՝ որ կանխում ես - «դա

գրականություն է», «դրանք գրականության մեջ են», «իրական կյանքում ո՞ւմ կերպարով է կարելի վերականգնել կորսված բարոյականությունը», ո՞ւմ ապավինենք, ես ու դու ումի՞ց կառչենք՝ որ տիղմը մեր ոտքերը չբռնի: Մեր հին գյուղերում ուշաբ էին ասում, գոմեշը՝ որ ջրի, ճահճի կենդանի է, որ կարող է Սևանը փնչալով կտրել, տիղմը ոտքերը բռնում ու գոմեշ էր խեղդում:
Հարցդ ստանալու օրից ի վեր՝ գրական ու իրական դեմքերի ամբողջ բազմություններ, մերազնյա և օտարազգի ծանոթ-անծանոթների անվերջ մի շարան է անցել աչքերիս առջևով, գնացել պտտվել, ինչպես որ սարի ետևով պտույտ տա, նոսրացած, անդարձ կորուստներ տված վերադարձել է՝ նորից անցնելու, կորուստներ նորից տալու, պայծառացած կամ մթնած, խոշորացած կամ մաշված, դիմակների հետ և դեմքերը կորցրած դարձյալ վերադառնալու. ամենից հաճախ Տուշինին եմ հիշել, Տուշին էր, չէ՞, Տոլստոյի կապիտանի անունը՝ որ պատերազմի հոգսը լծկանի նման քաշում է և թաց ոտքերը կրակի մոտ չորացնելով լծկանի պես լուռ է դիտողությունների ու կշտամբանքի առջև, և իր էլ, վերադասի էլ համար աննկատելիորեն է բնական՝ որ գործի բեռան հետ և կշտամբանքի ճիպոտներն են իրենը, մի խոսքով՝ գործի մարդ է, ինքն ու գործը միշտ իրար գտնում ու իրարու շունչ են տալիս. հաճախ իրեն Քրիստոսին եմ հիշել, հաճախ Հաջի Մուրադին՝ չեչեն դատապարտված զորավարին. այդ շարանի մեջ երբեմն մի երկու րոպեով բոցկլտել են ժամանակակիցներս, ընկերներս, ծնողներս, մեր բոլորի մայրերը՝ ովքեր սրբուհիների տանջանք քաշեցին, Մնձուրու խոսքով՝ «սրբուհի ըլլալու համար հոիփսիմեներն ու գայանեները մեր մայրերու տանջանքը չքաշեցին»: Եվ այդ ամբողջ ժամանակ իմ հին օրերից մի պատկեր՝ զարմանալիորեն թարմ, գույներն ու ձայները սիրելիորեն զնգուն, որպիսին միայն մանուկ հոգիներում է լինում՝ կանգնած էր իմ դեմ, իր նման շատ պատկերներից ոչ մեկին թույլ չէր տալիս փոխարինել իրեն: Սարի մայիսյան մշուշոտ արևի մեջ, երկու բլրի գոգում լիովին խամ մի տեղ, ուր մեզնից առաջ երբևէ ուրթ չի խփվել, մի տղամարդ՝ հետպատերազմյան հատուկենտ տղամարդկանցից մեկը՝ ում շունչը կենդան-անկենդան ամեն ինչի վրա խաղաղություն էր բերում, և հետպատերազմյան շատ երեխաներից մի տղա - երկուսով վրան են կապում: Մաքուր ալպյան նոր այդ ուրթատեղին, ուր թավուտ մոլախոտի իսպառ բացակայությունը վկայում է, որ առաջին բնակիչներն այստեղ այդ տղամարդն ու այդ տղան են, նշել է, հասկանալի է, գյուղի ղեկավարությունը, բայց վրանի տեղն ահա ինքը տղան ընտրեց. որտեղ

կկանգնեն գոմեշները՝ որ կիթը նանի համար հեշտ լինի, որտեղ խփվի վրանը՝ որ և տեղը կալ լինի, և բլրի փեշով քամիներից պաշտպանված, և իրենից վերև ուրիշ վրանի տեղ չտա. թոնրի համար որտեղ բացվի գետինը՝ որ և հեշտ բացվի, և ջուր չքաշի:

Բայց դուք չգիտեք վրանը ինչ է, իմ և ձեր վրանները տարբեր են, ձեր թեթև վրանները դուք բացում-ձգում-խփում եք, մեր ծանր թաղիքի վրանները մենք կապում էինք: Մերը ցրտին տաք էր ու արևին զով, ձերը ցրտին ու անձրևին՝ ոչինչ, տանելի է, արևին՝ անտանելի հեղձուկ, բայց մերը և անձրևին չէր կաթում, եթե լավ ուռուցիկ ձգված ու փեշերը պինդ հավաքված էին: Թաղիք մեր ժամանակ արդեն քչերն ունեին, խամ սարվորի մեր ջահել ընտանիքն, օրինակ, չուներ, այդ տղայի հին ու մեծ տունը պատերազմից առաջ ունեցել էր ու դեռ ուներ, սարերից թերևս վերջինը նրանց այդ թաղիքի մեծ վրանը վերացավ, որ Թումանյանը մի տեղ դագա է ասում, մի տեղ վրան՝ «Ախչի անաստված, նստի վրանում», «Հերիք է, ախչի, ներս արի դագեն», որ ծանր էր, փաթեթը երկու տղամարդով, եթե մանավանդ անձրև էր քաշել, հազիվ էին դնում եզնասայլին, բայց չէր կարելի սարերում թողնել. կպատսպարվեին, ներսը բաց կրակ կանեին, կթողնեին կգնային, կվառվեր:

Հիմա ինձ համար դժվար մի բան կա՝ ձեզ հասկացնել, թե ինչ է ուռը, ինչ է քրձենը և ինչ՝ չեղը, և՝ կարկասի հայերենը չեմ գտնում, կմախքը սիրուն չի, այնինչ՝ պատկերն սկզբում այնքան հստակ էր - հորեղբայր ու եղբոր տասնմեկ տարեկան տղա՝ զուտ երկուսով վրան են կապում, ուռերը տղան է հատել, քրձենը տղան է քաշել, չեղը՝ ոչ, չեղը Քոռի թուրքերից էին բերում, նրանց մեծ վրանի չեղը, որ հինգ երեխայի ու նրանց նանին՝ տատին՝ վրանը, դագեն՝ տեղավորում էր ու կարող էր մի երկու օրով մի երկու հյուր էլ ընդունել, դեռ պատերազմից առաջ ու մեզնից առաջ նրանց չեղը Քոռի թուրքերից էր եկել, տղայի ուղևորությունները դեռ այդքան հեռու չէին գնում, այդ հետո էր՝ 89-ի խառնակ ամռանը, որ տղան Վրաստանից դառնալիս հանկարծ հասկացել էր՝ որ թուրքերում է, ձևացրել էր՝ թե հենց թուրքերում էլ պիտի լիներ, հարցնելով բեռնամեքենան քշել էր 46-ի ամռանից իր, 36-ից ու դրանից էլ առաջ իրենց մեծ տան ծանոթների դուռը, ասել՝ որ ինքը ինքն է, անցնում էր՝ հիշեց, հյուրասիրվել էր, հասկացողաբար՝ կողքին ուղեկից էին դրել, մինչև Ղազախի մեր սահմանը բերել էին. այդ հետո էր՝ 93-ի աշնանը, որ Արարատից զանգահարեց, թե Արարատից է զանգում, Ղարաբաղի ճամփին է, չգնա՝ մեքենան ուրիշի կտան,

կտանի կփչացնի, գնա՝... «Վազգենին չէի՞ ասի». ապա զանգահարեց, թե գնում է, չգնալն էլ, գնալն էլ՝ երկուսն էլ անհարմար են, բայց գնալով՝ գոնե մեքենայի հետ կլինի. այդ հետո էր՝ կարծեմ՝ 98-99-ին, որ մեքենան ձեռքից առան, կարծես լավ տեղեկացված էին, որ նա կարողանում է մերկ ամայության մեջ տուն հիմնարկել ու տնտեսություն շենացնել. բայց հիմա 46-ն է, 46-ի մայիսի վերջերը, ինքը զուտ տասնմեկ տարեկան է, հորեղբոր հետ վրան է կապում, ուռերը մեկ առ մեկ ինքն է հատել, կոկել, թավուտից դուրս քաշել, քրձենը ինքն է քրձենիներից պլոկել, իսկ ես մինչև հիմա էլ չգիտեմ՝ թե քրձենին որ ծառը կլինի, չնայած իրենից կես տարով մեծ եմ, տասնմեկ տարեկանում հինգ-վեց ամիսը ահագին ժամանակ է. մեր տանը տղամարդ կա, և ուռը, քրձենը, վրանը նրա գիտենալու բաներն են, իսկ նրանց տան տղամարդը ինքն է, հայրը բանակից չեկավ:
Թումանյանը «Եղջերուն» պատմվածքում բրնուտ է ասում, մենք՝ բրմուտ - դրանք, գետինը որտեղ լավ պարարտ է՝ ծառերն իրարից լույս խլելով, իրարու ներքև հրելով եղեգնուտի խտությամբ բարձրանում ու բարձրանում են, կատարները ճոճվում է հեռու երկնքում, մանավանդ եթե դու ընդամենը տասնմեկ տարեկան ես ու քո տարեկիցների մեջ անգամ՝ կարճլիկ, բրմուտն ահա ջահել բոխիների այդ թավուտն է, ուռը՝ ջահել, շիտակ, վերձիգ բոխին, ասես եղեգն լինի՝ շամբ, դամիշ, կամիշ: Ղաժին ավելի ճկուն է, բայց մեր անտառը դաժուտ ու դաժի չունի:
Չեղը... հիմա ես մտածեցի, թե մեր հին ժամանակի թուրքերը իրենց հազիվ թե կապեին այդքան մանրիկ աշխատանքի՝ հատ առ հատ հազար հատ դամիշ կտրել, հատ առ հատ հազար հատ ու տասը հազար հատ երեք տեղից իրար կցակապել. Քոռի իրենց դամշկուտները երևի տալիս էին իրենց բոշաներին, սրանք էին երևի շամբը հատում ու չեղը քոչերի համար կապում:
Չգիտեմ, այդ տղան ինձ դաժի, ուռ, չեղ, քրձեն է սովորեցրել՝ դաժի, չեղ, ուռ, քրձեն գիտեմ:
Բոխի ուռերը մենք շուրջանակի՝ ձվաձև՝ խոր խրում էինք գետնին, ճկում, հանդիպակաց կողմերից իրարու բերում, քրձենով պինդ կապում: Քրձենը աղջկա ժապավենի լայնության կեղևե ժապավենն է՝ գուցե լորենուց, գուցե ուրիշ մի ծառից, հյուսիսի ռուսները իրենց տրեխը գուցե քրձենից են հյուսել, մեր ճգնակեցները գուցե քրձենով են իրենց քուրձերը հյուսել, չգիտեմ, մենք մինչև քիմիական պարանների մուտքը մեր ուռերը ճկում, խաչվող տեղերում քրձենի ժապավենով կապում էինք, և վրանի կարկասն արդեն պատրաստ էր:
Տասնմեկ տարեկան երկու տղա, չնայած անբաժան ընկերներ են, բայց

առանձին-առանձի՛ն տասնմեկ, ամեն մեկը տասնմեկ, երկու տղա ու մի տղամարդ՝ հետպատերազմյան հատուկենտ տղամարդկանցից՝ թաղիքը հիմա կքաշեն կարկասի վրա, և կարկասը մի կողմի վրա չի փախչի, տեղից ելնող անասունի նման ետևի վրա չի կքի, ապա թաղիքի քղանցքը՝ փեշերը, շուրջանակի կգոտևորեն չեղի լայն գոտիով՝ որ գոմշածագերը չծամծմեն վրանի փեշերը, խոզերը չքաշքշեն, և դռնակի տեղով ներս կմտնեն ու կասեն. «Բարի օր... էս ինչի եք դեռ քնած, օրն էս է ճաշ է դառնում», չնայած ներսը ոչ ոք ու ոչինչ չկա: Ապա լռություն կլինի, նրանք այդպես մի քիչ կկանգնեն կամ կնստեն, լռության մեջ՝ այդ տղայի երեխայական թեթև ֆսսոցը, որ գոմեշից ընկնելով քիթը կոտրելուց է ու տասը տարի հետո Երևանի բանակային բժիշկները պիտի ուղղեն, և մի երկու րոպեում այդ մեծ ընտանիքի ոգին պետք է հուշիկ դուրս սահի հնօրյա թաղիքից ու լուռ նստի այդտեղ, որպես թե ինքը վաղուց այդտեղ էր, տեղը վաղուց իրենն է, տղան ծնվելու օրից իրենն է, իսկ հորեղբայրն ու մյուս տղան ահա, չնայած շատ լավ օգնեցին, այնքան էլ իրենը չեն, հիմա դուրս կգան, կգնան իրենց տեղերը:

Գոմեշները ձորի տաք արոտներից դանդաղ բարձրանալու, իրիկունը այդ դռանն են կթի կանգնելու - կթվելու կամ մի երկու փափուկ խոսք լսելու կամ ձորում անտեր չմնալու կամ էլ այդ դուռն անտեր չթողնելու, ով գիտի: Շունը, երկու օր հետո, ձիուց ու նանից առաջ գալու, չնայած ուրիշ վրաններ արդեն կան, այդ վրանի շուրջն է պտտվելու, շեմքից ներս նայելու և, չնայած այնտեղ ոչինչ ու ոչ ոք չկա, ձիուն ու նանին ընդառաջ վազելու՝ թե իրենց տունը գտել է, այնտեղ կանգնած է: Հորեղբոր ձին, նանից ու շնից առաջ, բարձած գալու և, չնայած ինքը հորեղբոր ձին է և իրենք սարի իրենց տունը ունեն, կածանից թեքվելու՝ այդ դռանն է կանգնելու, որովհետև այդ բեռն ու այդ վրանը միմյանց են պատկանում: Ապա՝ պուճուր, շարմաղ, սիրուն նանի սանահնեցու կանաչ-խաժաչ երեսն է երևալու, բայց այդ՝ հետո. երկու օր հետո, հիմա հորեղբայր ու եղբոր տասնամյա որդի վրան են կապում, պինդ, ծանր, ասես ոչ թե չորս ամսվա, այլ անվերջ ժամանակի համար՝ վրան են հիմնում, և հորեղբոր ամեն խոսքի ու վոչոցի, ամեն շարժումի մեջ նեղվածություն է եղբոր համար՝ որ գնաց ու չեկավ, բոլորի համար՝ որ գնացել ու ետ չեն գալիս, իրենց գործերը թողել են մի հորեղբոր վրա. և նեղվածի նրա խոսքի մեջ, ինչ էլ ասի՝ եղբոր կարոտն ու այս թիզուկեսի սերն է: Ես կանգնած եմ նրանց մոտ կամ թերևս դեմ-դիմաց մյուս բլրալանջի այն տեղը՝ ուր սարի մեր տնակն է լինելու, և չգիտեմ, որ մեծի և փոքրի՝ ավագի և երեխայի

նրանց այդ ընկերությունը՝ երբ ավագի հատուկենտ խոսքից, ծանր ու պինդ ծնկելուց, ձեռքի ժլատ ու պինդ շարժումից, ձեռքն ասես խոփ է ու սևահողի տակ է շարժվում, լարված սևակարմրելուց ու հոգնած հոգոցից ոչինչ չի կորչում, ամբողջը լցվում է տղայի մեջ, և երեխայի նրա արածից ու անելիքից ոչինչ չի կորչում, ամբողջը ավագի նրա էություն է քաշվում՝ որպես հպարտություն եղբոր որդու համար և որպես գոհություն, բոլոր ընկերություններից ամենասիրելի այդ ընկերությունը ինձանում տպավորվում ու ինձ հետ գալու է մինչև այսօր:
Հորեղբայրը նոր է եկել կա՛մ Ղազախի թուրքերից՝ ուր այն տարիներին մեր գյուղերի ոչխարը ձմեռոցի էր լինում, կա՛մ Սևանհէկի շինարարությունից՝ ուր գերման ռազմագերու հետ եզնասայլով քար էր քաշում, չեմ հիշում, գիտեմ միայն, որ երկու տեղից էլ լավ զզված ու հոգնած կգար և ուզածը մի լավ լողացվելն ու մի երկու օրվա քունը կլիներ, այնինչ՝ այստեղ ամբողջ գյուղի ու դեռ եղբոր տան հոգսն էր: Եկավ տեսավ, որ այստեղ իր և՛ հոգնությունը գիտեն, և՛ ունեն արժանապատիվ գիտակցությունը այն բանի՝ որ ինչքան էլ տղամարդ ու հորեղբայր՝ չի կարելի ուրիշի ուսերին բեռ դառնալ, չի կարելի առհասարակ բեռ լինել, և այստեղ իրենից խնդրվում է միայն, որ իր բարի շունչը այստեղ լինի, որ փոքրերը կողքին ֆսսալով նստեն նայեն՝ և մյուս ոչխարն արդեն իրենք են խուզելու, վրանի դռնակն իրենք են կախելու, թոնրի տեղն իրենք են կտրելու, իր խաղաղ բարկությամբ՝ եզան հետ իրենք են խոսելու, և եզը ենթարկվելու է, մշուշոտ, դուման ձորի թուրքերի մասին իրենք են իր հանգիստ խաղաղությամբ ասելու «ձորի մեր թուրքերը», չնայած իրենք միայն տասնմեկ տարեկան են և «իրենց ամբողջ կյանքում ոչ մի անգամ թուրքերում դեռ չեն եղել»:
46-ի ամռան մեր խաղերի մեջ ես այդ տղային չեմ հիշում. ինքը տան տղամարդու իր գործերին էր, այնտեղ՝ ուր հայրն ու հորեղբայրն էին լինելու: Մինչև հիմա էլ թուրքի, թուրքի շան, թուրք բնակատեղիի իմ վախը ես չեմ հաղթահարել, իսկ իրեն հիշում եմ՝ որ ձորի նրանց ուրթից գալիս էր: Գնացել էր տեսնի՝ Քոռ Ահմադը այդ տարի սա՞րն է եկել: Իր աչքն ինչո՞ւ էր ուռած: Մեղուն կծել էր: Ուրեմն իրենց փեթակներին արդեն ինքն էր նայում, արդեն չէին խնդրում ուրիշների: Հետո, ինքը չգնար էլ՝ գոմեշներն էին թուրքի ձորն իջնում, ջարդն ու գոմշացեխերն այնտեղ էին: Քոռ Ահմադը թերևս ասել էր. «Քոռը, տղա, էդ է դու ես՝ ի՞նձ ես քոռ ասում», ինքը ծիծաղել ու թերևս ասել էր. «Իմը՝ մեղուն է կծել, բայց քո անունը Քոռ է»: Քոռ Ահմադը գուցե ասել էր. «Գիտե՞ս մեղուն ինչու է կծել - տեսել է մեղրը Քոռ Ահմադից թաքուն ես ուտում՝ կծել է», կամ նման ուրիշ

մի բան, որ ոչինչ չէր նշանակում, ուղղակի պարզ համակեցության նշան էր: Այդ տղայի հետ վերջին անգամ հանդիպել ենք անցած օգոստոսին: «Ոչինչ, ապրվում է, շատ մի մտածի, ասաց. էդ ի՞նչ էինք անելու՝ որ չենք անում, էս է՝ էս ենք անում. քաղաքի լճակները գիտես, էն երեք լիճը՝ որ իրարից վերև կային, հեղեղները բերել տիղմ են լցրել, քաղաքապետը տվեց ժողովրդին. իմ տեղը ես երկու տարի է լոբի եմ ցանում, հիմա լավ ծաղկած լոբուտ է. կարտոլ անող էլ կա, բայց իմ կարտոլը ես Ստեփանավանի գյուղերում եմ անում: Արաղը՝ ես խանութի արաղ չեմ խմում - իմ ձեռքով քաշածը: Դու էլ ամեն ինչը մտածմունք մի դարձնի, կյանք է՝ կապրենք: - Ծիծաղեց. - Մայմեխ խոտ ենք հնձում՝ ջահելներին բոլորին ծալում եմ. ծխում են, գերանդվի տակ չեն դիմանում»:
Վստահ եմ, որ այդ փոքր մեծ մարդիկ և քո ու ձեր կյանքերում են եղել ու կան. նրանք այնքան մեծ չեն՝ որ երևային իմ և ձեր տեղերից ու բոլոր կողմերից, բայց և շատ են, ամեն մեկիս կյանքում՝ գոնե մի քանիսը, և շատերս ու բոլորս ենք այդ փոքր մեծ մարդը, մեզնում և մեր մեջ ինքը միշտ եղել է ու կա՝ որպես հայր, ընկեր, կին, որդի, կողմնակի անծանոթ, ժողովուրդ:
Բեյրութցի Անդրանիկ Ծառուկյանը՝ շատ լավ գրողը, շիտակ հրապարակագիրն ու սթափ քաղգործիչը՝ ով քո հարցի հետ գլխավերևս կանգնեց ու չհեռացավ, վավերագրության իր «Մեծերն ու մյուսները» հատորի «Կային և չկան» շարքից հուշում է. այդ անանուն փոքրերը Փարիզ, Ցյուրիխ, Հռոմ, Երևան կային՝ և անվանիի իմ կյանքը շքերթ էր դառնում, հիմա անցել են, չկան՝ և իմ կրակն է նստում, առանց նրանց հիմա ես եմ մարելու:
Գործարար իրականությամբ, որ, ասենք, արտահայտվեին և Քըրք կամ Չայկովսկի դառնային, իրականության գործնականությամբ նրանք չեն նշվում ու նշանավորվում, դա նրանց հակացուցված է, հասարակի, սովորականի, անանունի ժողովրդական նրանց մարմինը ոչ երկրային, ոչ էլ երկնային խթանիչ՝ դոպինգ չի ընդունում, դա նրանց հակացուցված է, գրիչներից նույնպես խուսափում են, բայց նրանք մի մեծ առավելություն ունեն՝ շատ են, ժողովուրդ են, ինքը ժողովուրդն են՝ որ անբարոյականությունից որպես բնազանցությունից է խորշում, այլապես մեր կյանքը կյանք չէր լինի և կյանքն առհասարակ չէր լինի:
Նրանց վերաբերմամբ մենք անելիք չունենք - որ, ասենք, տհաս են և մենք նրանց հասու ենք դարձնում, որ, ասենք, չգիտեն հայրենիքն ինչ է, ասել է՝ չգիտեն իրենք ով ու ինչ են, և մենք նրանց հայրենասեր ենք դարձնում, որ, ասենք, անհավատ են և հավատի ենք բերում, նրանց վերաբերմամբ, ոչ, մենք փրկչական

առաքելություն չենք կարող ունենալ, բայց մեր իսկ վերաբերմամբ անելիք ահա ունենք - գոնե երբեմն մեզ նայել նրանց հայացքով:
Հենց այսպես՝ մեզ նրանց հայացքով նայել, համոզված լինել՝ որ նրանք կան մեր կողքին և մեզ նայում են երբեմն Ֆեոդոր Դոստոևսկու հայացքով, երբեմն մեր հեռավոր պատանության տղայի՝ որ մեզ չի լքել ու մինչև մեր օրերի վերջը չի լքելու, երբեմն ուրիշ մեկի, և մեր վարքը, մեր ընթացքը, մեր պահվածքը շտկել ըստ նրա, նրանց, ժողովրդի, և զգուշանալ հողի նրա փափուկ հնազանդությունը չարչարելուց, և վախենալ նրան դառնացնելուց, և սարսափել նրա քամահրանքից:
Վազգենը այդ տղային իր հոգու մեջ ուներ, Վազգենը պոետ էր և երևի թե այդ տղային ա՛յ էն բլրի գլխից իրեն հետևելիս էր տեսնում. Կարեն Դեմիրճյանը գիտեր ժողովրդական վերաբերմունքի ծանր կշիռը և երկյուղում էր այդ կշռից մի ունցիա իսկ կորցնելուց. Վազգեն կաթողիկոսը մեր նախնիներից ու մեր գալիքից մի ամբողջ շքախումբ էր կազմել իր շուրջը և արքայավայել իր պահվածքը նրանցով ու նրանց համար էր. սպիտակ ձիու վրա Անդրանիկը իրեն ժողովրդի այդ հայացքի ներքո էր պահում, այլապես՝ վաղուց էր պարտված ու ծեր. նրանք բոլորը մարդ էին՝ որ ոտքները մարտադաշտ դնելու հետ կարող էին ասել՝ «Աստված մեզ հետ է», բայց վատ չեղավ՝ որ բարոյականության խորանի պարապը չբնակեցրինք նրանցից մեկնումեկով և անգամ Թումանյանի կամ Ալեքսանդր Մյասնիկյանի կերպարներով. փոխարենն ահա ստույգ բանաձև ունեցանք.
Ըստ ժողովրդի, ժողովրդով ստեղծված մեր իսկ կերպարներով է կարելի վերականգնել կորսված բարոյականությունը:

- Ժամանակին Դուք Լևոն Տեր-Պետրոսյանին հորդորում էիք հրաժարական չտալ, ասելով, թե դա Հայաստանը ետ կգցի մի երեք տարով: Կարծո՞ւմ եք արդյոք, որ Ձեր կանխատեսումը իրականացել է:
Արմեն Դուլյան, «Ազատություն» ռադիոկայան

- Եթե իհարկե մուսալեռցու նրա կողը այդքան բաց ու զգայուն էի համարում որևէ հորդորի առաջ, եթե իշխանավորներն առհասարակ ղեկավարվում են մեր հորդորներով, եթե նրանք ամեն ինչ ու հենց սկզբից չգիտեն: Եթե այդպես լիներ՝ հիմա Ձեզ խնդրելու էի գնալ հորդորով մեղմելու այս մյուսի դարաբաղցու կողը՝

թող այս-այս-այս բաները այսպես-այսպես-այսպես անի:
Այդպես չէ, բայց եթե «հորդոր» ու «մի երեք տարի» եք ասում, պատասխանեմ: Ցավալիորեն՝ այո, ցավալիորեն՝ տան սյուները ամեն մի նոր եկողի բուսնովի են թվում, ամեն մի հեռացող իր հետ հնարավորություններ ու հեռանկարներ է տանում՝ որ իր սեփական հնարավորությունն ու հեռանկարն են թվում և ոչ հանրապետությանն ու իր հաջորդինը, ցավալիորեն՝ կանխատեսումն չէր, այս դեպքում սև մարգարեի իմ փառասիրությունը գոնե բավարարված կլիներ, այլ պատմության դասագրքերի պարզ ընթերցումն. քոչինյանական կայունությունն ու խաղաղ վերընթացը այն հին, արդեն երեսնամյա հնության օրերում չէին հանդուրժել և փոխարինել էին դեմիրճյանական իշխանությամբ, տասը տարի անց՝ ձեռնտու չէր արդեն դեմիրճյանական խաղաղությունն ու վերապահ զգուշավորությունը վերակառուցման ժամանակների առջև, և դարձյալ տասը տարի անց՝ արդեն տեր-պետրոսյանական կայունությունը. ո՞ւմ, ո՞ւմ չէր ձեռնտու - երևի թե նրանց, ովքեր առանց դատախազի իրենց ներկայության այս երկիրը չեն պատկերացնում. հիմա՝ այսպես՝ վարկաբեկված ինքնիշխանությամբ, «մեռելատեղից» կանգնել չփորձող արդյունաբերությամբ, արտագաղթով՝ երևի թե ձեռնտու է կամ նույնիսկ այսպես չի ձեռնտու, ո՞ւմ - ես չգիտեմ, երևի թե հարցնելու ենք մեր ՊԱԿ-ին ու ազդեցիկ կուսակցություններին, եթե նրանք իհարկե մեր կուսակցություններն ու մեր ՊԱԿ-ն են և ոչ թե կուսակցություն ու ՊԱԿ են մեր վրա, եթե առհասարակ որևէ բան են:
Ի՜նչ գեղեցիկ էր Մեքսիկան, այո՞, որ փեշերն իր երկրաշարժի վրա փռեց ու ոչ երկրաշարժի փոշին հասցրեց աշխարհի քթին, ոչ էլ աշխարհի կարեկցանքն ու օգնությունն ընդունեց: Ի՜նչ գեղեցիկ էր Չիլիի Պինոչետը, որ երկրի ողջ խառնակչությունն ու աղմուկը մի մարգադաշտ ժողովեց ու երկրի վրա տասնամյա խաղաղ լռություն մաղեց: Ի՜նչ գեղեցիկ է՝ մեծ ու կամային երկրի քաղաքացի լինել: Ի՜նչ գեղեցիկ է՝ երկրից ու երկրի վրա հառնել տիրականորեն և երկրի պատկերի առջև մարդանալ, մարդ դառնալ, հպարտանալ հիմքերիդ ամրության համար:
Մեր նախկինները իշխանության գալուց «մի երեք տարի» հետո միայն հասկացան, որ երկիր են ժառանգել, մի երեք տարի հետո միայն այս երկրի պատկերի առջև մարդացան, այս երկրի, այս երկրի մարդու սերն ու հոգսը մի երեք-չորս տարի հետո միայն նկարվեց նրանց երեսներին, և բնական է, որ նույնքան էլ նորերի համար էի ենթադրելու, Դուք ասում եք «կանխատեսելու» -

թե մի երեք-չորս տարում նվաճողից կվերաճեն տիրոջ, ամեն մոլտոցից չեն վախենա, ամեն թփի տակ պահակ չեն կարգի, երկրի պատկերի առջև կմարդանան, այլանդակության առջև կկնճռոտվեն և գեղեցկության առջև կծաղկեն:
Բայց լավ վրիպել եմ. ի՜նչ երեք-չորս՝ յոթանասուներեք-յոթանասունչորս էի «կանխատեսելու», Խորհրդային Հայաստանի իրականությունը բացառելով, որպես թե անբնակ ամայությամբ են անցնում, որպես թե այդ ժամանակը ասես չի էլ եղել, պետք է իջնեի հարյուրամյակի խորքերը՝ բաց կրքերի ու անսքող հավակնությունների ժամանակը, ուր ժողովուրդը հենց անդեմ ու անանուն լուռ երկրի զանգված է որ կա և իր վրայով անմռունչ է անցկացնում իր որդիների չար խաղերը:
- Երբևէ Մարկեսի նման ցանկություն չե՞ք ունենում վերցնել ձայնագրիչը - և վերադառնալ լրագրություն, ինչից սկսել եք:
Ռուզան Խաչատրյան, «Ազատություն» ռադիոկայան

- Հայ գրականությունը երբեք վերացարկման այդ անողոք դաժանությունը չի ունեցել, որպեսզի երբեմն էլ ձայնագրիչը ձեռքին փողոց իջներ՝ իր ճշմարտացիությունը մարկեսաբար ստուգելու: Հայ իրականությունը չարքերի պակաս չի ունեցել, իսկ «Չարքերը» գրվել է ռուսերենում: Մոր ծիծ կտրողները և մեզնից են անպակաս, իսկ «Քաղաքացիական պատերազմը» նկարվել է հեռու Արևմուտքում: Թուրքիայի ամենաօրինապահ հարկատուն բոզանոցների հայ տիրուհին է, իսկ հայ գրականությունը «Խոնարհ աղջիկ» ու «Մեր մայրերն» է մրմնջում: Ֆանտասմագորիայի, մղձավանջի, զառանցանքի իրականությունը ծավալվել ու ծաղկել է այստեղ - մեր իրականության զառանցանքը մեր ընթերցողը պետք է ճանաչեր այլ հորիզոնականներում, այլ լեզուներում, այլ հասարակություններում:
Սա մեր գրականության արա՞տն է, թե՞ առաքինությունը: Արատն է կամ առաքինությունը, բայց այդպես է, ի սկզբանե այդպես է եղել: Թագավորին ու թագավորությունը կորցրած հայ մարդը ապաստանել է հայ գրականության մեջ, և մերը ապաքինումի, խրախույսի, մխիթարության, հույսի ու հավատի առաքելական գիր է եղել: Դա յուրովի կուսակցականություն չէ՞, դա նույն կողմնակալ գրականությունը չէ՞, գրականությունը կողմնակա՞լ կլինի, կողմնակալ գրականությո՞ւն կլինի: Չի լինի, և 88-ից բաց-ընկած և առայսօր

ծավալվող ու դեռ ծավալվելի ծով իրականությունից ոչ մի դեպք ու իրադարձություն իր նախադեպը չուներ հայ գրականության մեջ, որպեսզի կարողանայիր ասել՝ այս էլ ահա այս էջից է ընկել այստեղ, իսկ հոկտեմբերի 27-ը լիովին անակնկալ էր հայ գրականության համար, բայց երբեք՝ հայ իրականության:
Դիտումնավոր՝ մոռացության եմ տալիս հայ գրականության մի երկու խոշոր փաստ՝ Չարենցի «Երկիր Նաիրին», «Պատմության քառուղիներումը», «Մահվան տեսիլը», Բակունցի «Պրովինցիայի մայրամուտը». դրանք կան, այն էլ ինչպես կան - «Պատմության քառուղիներով անցել ենք մենք անդեկ ու անգաղափար, շառագունված անվերջ ուրիշների հրով» - բայց դրանք մեր իրականության հանդեպ մեր գրականության վերաբերմունքի ողնահարը չեն, մերը, կրկնում եմ, ապաքինումի վերաբերմունք է:
Իրականությամբ վավերացվելու, նորոգվելու, վերածնվելու կամ, եթե ոչինչ ենք՝ լիովին ոչնչանալու Ձեր այդ մղումը ես հասկանում եմ, Ձեր մի-երկու փորձին ծանոթ եմ և կարելի է ասել՝ Ձեզ համակիր: Բայց ես էն հին քոռն եմ. արդեն տասը-տասնհինգ տարի է իրականությունն ինձ այլ դեմք է ցույց տալիս - ես դարձյալ իմ հին պատկերներին եմ: Ձեր այս նոր ժամանակներում, մի քանի տեղ մի քանի անգամ, եղել է, ամբողջ, ավարտուն ֆիլմեր եմ տեսել, անաղարտ, գեղջկական, խոհով ու լրջությամբ լեցուն հայերենի մեղեդի եմ լսել - կինոխցիկդ ու ձայնագրիչդ բացիր՝ և «Հայոց հող» վավերագիր ֆիլմ ու հայերենի շարական ունես: Վավերականի հմայքն ու զորությունը ես գիտեմ, գիտեմ՝ որ «նոր ժուռնալիզմ» հոսանք կա՝ իր Նորման Մեյլորով ու Մայքլ Առլենով, և մեզանում բարի ընթացք նման մի հոսանքի, բայց ես չեմ տրվի այդ վավերականությանը, որովհետև երբեք էլ այն «անվավերը» չեմ եղել:
Անդրեյ Տարկովսկու «Անդրեյ Ռուբլյովը» հիշում եք: Կներեք, որ յոլա չեմ գնում առանց բարձր անունների. նրանք իմ կյանքն են՝ այդ Բեկկետը, այդ «Պոնձե հեծյալը», այդ «Հաջի Մուրադը», այդ «Դանթեական առասպելը»... Թե չէ գավառն ու գորշությունը ինձ լլկելու էին, ինչպես որ լլկում են: Լավ ֆիլմ չէ՝ մեծ ֆիլմ է. արված է ի հեճուկս և ի փառս մեծ ազգի և պետության, արված է մեծ կամքով ու նյութի ծանր դիմադրության հաղթահարումով: Անդրեյ Ռուբլյովը այնտեղ «Ահեղ դատաստանը» չի նկարում, չի ուզում նկարել, տատամսում է, վանքը կանգնած է, Ավետարանի մյուս դրվագները պատերին են, «Դատաստանի» սպիտակ պատը սպասում է իր մղձավանջին, իսկ Ռուբլյովն

ահա - չի ուզում ծնողը լինել այդ մղձավանջի: Տարկովսկին այնտեղ տեղ է թողել այլ մեկնության - որպես թե ժամանակի իշխանները մեր շնորհքը իրենց վանքերի համար մեզնից կորզում ու մեր աչքերը հանում են, որպեսզի մեր աչքերը գույներ ու ձևեր չպարգևեն այլ պատերի, բայց ես իմ հասկացածն եմ հասկանում. ես չեմ որմնանկարի «Ահեղ դատաստանը», որպեսզի ահեղ դատաստան չլինի. ինչ փնտրում՝ էն ենք գտնում - ես չեմ նկարի «Ահեղ դատաստանը». խավար ենք փնտրում՝ խավար ենք գտնում - իմ խավարով ձեր աշխարհը ես չեմ պատի: «Ի սկզբանե էր բանը», մեր խոսքը գործ է դառնում, իմ «Դատաստանը» սպիտակ ծեփի շերտերի խորքում թող այդպես էլ չբացվի:
Ասում եք՝ իսկ Դալի՞ն, իսկ «Գե՞ռնիկան», իսկ «Մահվան տեսի՞լը», իսկ «Չարքե՞րը»... Մի՛ ասեք «իսկ Դալի՞ն», որովհետև նրա առջև ամենևին ինքը չփոեց այն երկիրը՝ ուր հառնեց ու հաստատվեց ինքը Դալին, այլ լիովին այլ աշխարհայացքի ուրիշ մարդիկ:
... Միևնույն 1915-ին են վերաբերում Թումանյանի և՛ ռազմաճակատային՝ Արևմտահայաստանյան օրագրերը, և՛ «Հայրենիքիս հետ» ողբը. «Շատախեցիք գաղթելուց առաջ կոտորել են իրենց ծերունի հայրերին ու մայրերին ու հիվանդներին - իրենց ձեռքով թաղել - էնպես եկել»: «Կային այլ տեղերից, շալակած ոտով բերում էին իրենց պառավ ծնողներին»: «Փոքրիկ 10-12 տարեկան երեխաները շալակած իրենց փոքր եղբայրներին ու քույրերին: 4-5 տարեկան երեխաները օրական 30 վերստ ճամփա են եկել»: Եվ ապա. անպիղծ բերանի պոետները պիտի գովեն քո նոր կյանքը նոր երգերով, նոր խոսքով.
Իմ նո՛ր հայրենիք,
Հզոր հայրենիք:
Չուզեցի իր դասական-հանդիսային խոսքը լրագրի ձեր շարվածքով ջարդված տեսնել և քաղաբերումը իր շքեղ, այրական, զորագնդորեն կազմակերպված տեսքով չներկայացրի, բայց այսպես էլ մեզ այլ վերաբերմունք, այլ կեցվածք, այլ ընթացք է պարտադրում, քան օրագրերի իրականությունը. - «Մինը հանկարծ լաց է լինում, մի մասն էլ սկսում են նրան հետևել, այնինչ մի քանիսը հանդարտ նայում են նրանց, իրենց չորս կողմը ու շարունակում ուտել - ոմանք էլ փիլիսոփայորեն մտածում են լուռ»:
Նույն 15-ի նույն վայրերից իր մղձավանջային տպավորությունները Սարյանը կարողացավ վերհիշել հիսուն տարի հետո միայն, երբ տիեզերագնացների հետ «կոսմոս, կոսմոս» էր շշնջում և նրանցից ավելի հիանում երկրագնդի եզակի

գեղեցկությամբ, որ նաև իր ստեղծածն էր. իսկ նկարչի նրա կյանքը նույն 15-ից «Քաղաքիկի ծաղիկներ» ու փառահեղ «Իոսիֆ Մանթաշով» էր բերել. եթե գիրքը ունեք՝ բացեք նորից հիացեք - աշխարհն այդքան անա՞նց է լավը, մարդը այդպես անդրդվելի՞ է վստահ: Եթե ասեք, թե 1915-ին Սարյանի առջև աշխարհի ու մարդու անանց հմայքի այդ իրականությունը չէր, այլ այս, և վկայաբերեք Սարյանի իսկ հուշերը անթաղ մեռելների, կրծքի իր երեխային իր շեկ, երկար ծամով պատանող մոր մասին - նկարչի և մեր 1915-ը սպիտակ պատ եք դարձնում՝ մահ և լռություն: Մի՛ դարձրեք, ինքը չի դարձրել՝ դուք էլ մի դարձրեք: Նույն այստեղ, ուր հիմա մենք ենք, հարյուր քայլ այս կամ այն կողմ, նույն այդ ժամանակներում ապրել է մեր նշանավոր Կոստան Զարյանը. կարմիր թուրքերից մահապուրծ՝ եկել է հայրենի երկիրը գմբեթելու եվրոմշակույթի երկնքով՝ Վելասկես, Դանտ, Սպանիա, Բոդլեր, հելեններ... այնինչ գյուղացիների այս գորշ գավառը գլուխը բարձրացնելու ոչ ուժ, ոչ էլ ցանկություն ունի. ցուրտ, աղբ՝ պատուհանի հենց դեմը, միջնորմի ետևը՝ թուրքի լուռ ընտանիք, չեկիստներ ու ռուս չեկիստ թուրքի տանը՝ որ իր օրապահիկն ու թուրքի կնկան թուրքի հետ հավասար կիսում է, կոմիսարներ, Աստաֆյանը, սառը, անարև, անոթի, գորշ հունվարի վերջին տասը օրը, կարմիր բանակը Աստաֆյանի գլխին՝ Առաջնորդի կարմիր դագաղը մռայլ, պրկված բանակային գորշ զանգվածի գլխին, որ հիմա զսպված ձայնի մի հրահանգով պետք է քայլ դնի և քաղաքը համակի իր այրական վշտով. Առաջնորդը՝ Միակը, Կարմիր Մոսկվայում վախճանվել է, և երկիրը որբացել է, և կարմիր հուղարկավորությունը, հասկանալի է, հիմա նույնպես Մոսկվայում է, կարմիր դագաղն այստեղ ինչի՞ համար է. այդպես է. ողջ երկրով մեկ՝ կարմիր դագաղները պետք է դնեն, կաշվե բաճկոնավոր կոմիսարները պատվո պահակության ու լուռ երդումի կանգնեն, կարմիր չեկիստները... այդպես է, այդ ժամանակի այստեղի իրականությունը ճիշտ այդ է և ոչ թե այս՝ որ ճիշտ այստեղից ու այս ժամանակից է, աղավնու երամի պես, ծնծղայի ծափի պես բարձրացել.

Բորբ մի աղջիկ զարկեց ձեռքով իր բոց կոնքին
Ու վերևից խնդաց զվարթ ու ոսկեձայն.-
Հազար վարդեր կրակվեցին շուրջը, կողքին,
Հազա՛ր խաշխաշ, ու գարնան օր, ու ծիածան:

Չարենց, այո: Չարենց, «1921, մայիս, Երևան»: Եվ կամ - նույն այդ կարմիր

դագաղով հուղարկավորությունը.
Մենք փող զարկինք, և արձագանքն ահավոր
Երկրից երկիր որոտաձայն շառաչեց,
Եվ արտերում միլիոնավոր, բյուրավոր
Ըմբոստությունն ահագնացավ ու աճեց:
Եվ կամ՝ «Ես իմ անուշ Հայաստանի» ազգային մեր օրհնե՞րգը, զինվորի մեր երդո՞ւմը, տա՞ղը, ո՞ղբը... - «անհաս փառք», «ճերմակ Արարատ», «արնանման ծաղիկ», «վիշապաձայն բուք», «երկաթագիր գրքեր»... բառեր են՝ որ հյուսվում ու նոր եկողների համար նյարդային համակարգ են դառնում, որ միմյանց ագուցվում ու սերունդների համար ողնահար են դառնում, որ շիտակ ու բարձր մարդու կեցվածք ու լեզու են դառնում թերևս նաև այն թրքուհու համար, որ օրապահիկի հետ լուռ կիսվում էր չեկիստի ու ամուսնու միջև, կամ հենց թեկուզ բուն-նահրցու համար՝ որ կար, և այսօր կա, և միշտ հուսահատ, հոգսի տակ միշտ կքած՝ ցախ-ծախողի հայացքի խորերից երբեմն նայում էր, և նրանց հայացքները երբեմն միմյանց կառչում էին - նրա՝ ցախ ծախողի՝ նահրյան բուն իրականության, և նրա՝ գալիքի շիտակ, անթեք մարդու առջև նահրյան այլ իրականություն բացողի:
Վաղը, ընդամենը վաղը, երբ այդ այլ իրականությունը սկսի դառնալ իրական իրականություն, և մանավանդ քառասուն տարի հետո, երբ հաստատված ու իշխող իրականություն կլինի, մյուսը՝ երեկվա իրական իրականությունը, խնդրեմ, իր ժամանակի տարեգրության իրավունքով, գրքի, վկայության տեսքով կարող է թերթվել, վիճվել, վիճարկել, գանգատվել, մեղադրել, մի խոսքով՝ ապրել գրքի իր համեստ կյանքով, բայց երբեք ներկան փոխարինել իրենով: Ներկան ձևավորվել է այլ ձեռքերի տակ, ջերմացել է այլ հայացքներով, ներկայի այգիները քո այգիները չեն, և քո աչքը հեքիաթի չար աչք է դառնում ներկայի վրա:
Գեներալ Ֆրանկոյի անունը այստեղ հիշելու ազգային իրավունքը մենք ունենք. Իսպանիայի քաղաքացիական պատերազմի նման կռիվներ և այս հողն է ութսուն տարի առաջ ունեցել, գեներալի՝ երկրի տիրոջ ու որդու նման, որ երկրի բոլոր ծագերից մի հովիտ ժողովեց բոլոր նահատակների աճյունները և բոլոր ծագերին ի տես խաչ կանգնեցրեց, խաչ դրեց հավատավոր ու անհավատ, արդար ու մեղավոր բոլոր-բոլորի վրա, և այս ժողովուրդն է ունեցել այդ որդին ու տերը՝ Ալեքսանդր Մյասնիկյան: Իսպանական պատերազմը մենք գիտենք մի քիչ պատմության դասագրքերից - կոմունիստները և փաղանգավորները

կենաց-մահու կռվի մեջ իրար արյուն են խմում, և շատ՝ «Ո՞ւմ համար են ողողանջում զանգերը» ամերիկացու վեպից - զանգերը ի լուր քեզ են ողողանջում, մեռնող ամեն իսպանացու հետ քո հոգում մի բան է մեռնում, ամեն հեռացողի հետ դու ես կողոպտվում:
Իսկ մեր պատերազմը մենք գիտենք մի քիչ մեր պատմության դասագրքերից, կինոնկարներից, հուշերից, վկայություններից - կոմունիստները և դաշնակցականները կենաց-մահու կռվի մեջ իրար արյուն են խմում, և շատ՝ դարձյալ նույն վեպից - ամեն մեռնողի հետ դու ես մեռնում, ամեն կացնահարողի հետ դու ես անասնանում, ամեն դավի հետ քո երեսն է մթնում, ամեն մահավճռով դու ես դահիճ դառնում, կուսակիցներիդ հրահրումով ասպարեզը դու ես խելագարությանը հանձնում - զանգերը քեզ համար են ողողանջում, զանգերը քեզ վրա են ողողանջում՝ կողոպտվածիդ ու սպանվածիդ:
Ժամանակի այդ իրականության մասին մեր խոսքը նույն խելագարության հիմար կրկնությունն է եղել, այդ խոսքից հնչյուն իսկ քաղելու պետք չունենք, բայց մեր գործն ահա - ասպարեզ է հրավիրվել բանականության ու հանդուրժումի բարձր մարդուն՝ բանականության ու հանդուրժումի ասպետին՝ Ալեքսանդր Մյասնիկյանին՝ նոր-նախիջևանցուն, լազարյանցուն, Տերյանի ընկերոջը, կոմունիստին, ճակատայինին, Բելառուսը հիմնադրողին, լենինյանին, նրան՝ ում համար կուսակցական ուղղափառությունը անձնական արատ էր և կողմնապահ համառությունը՝ էշություն:
Ժամանակի հեռավորության մշուշը չի նրան մեծացնում - նրան մեծացնում է մեր և նրա ժամանակի մերձավորությունը: «Չունեինք մենք դարեր - հայրենիք: - Եվ նա մեզ հայրենիք տվեց» (Չարենց): Միայն օտար հողում, միայն տարազգի թշնամիներն այդպես իրար կկոտորեին, ինչպես որ մենք էինք նրա հայտնությունից առաջ կոտորում միմյանց: Այ թե ում ոտքերի առջև էր նա հայրենիք փռում, ահա թե ում էր նա սթափության կոչում:
Մխիթարություն է, որ նրան վերացրին ո՛չ մեր նացիոնալիստները, ո՛չ մենք: Բայց ահա մխիթարվելու ոչինչ չունենք, որ վազգենով ու դեմիրճյանով վերակերպավորված Ալեքսանդր մեծ Մյասնիկյանին տապալեցինք ինքներս մեր ձեռքով: Վազգենն, այո, այդքան սթափություն ուներ՝ որ բռնկուն իր անձը մարմնավորումի չտար հանդուրժումի ու բանականության կերպարին - այդ կերպարը համազգային մեր ասպարեզում Դեմիրճյանն էր լինելու, և Դեմիրճյանն էլ, ի մեծ պատիվ իրեն, ուներ այդ սթափությունը՝ որ չհանձներ իրեն

եռանդի ու գործնականության նույն կերպարին - սա արդեն Վազգենի տարերքն էր:
Ասում եք՝ վերջն ի՞նչ է լինելու:
Նրանց տապալումը այդ կերպարի տապալումը չէ. նրանց՝ Վազգենի և Դեմիրճյանի տապալումը, թշնամուց որքան էլ ճիշտ ընտրված, միայն իրենց կործանումն էր. կանչելու ենք, և մեզնից ու մեզնով բարձրանալու է նույն կերպարը՝ բանականության ու հանդուրժումի մարդը: Նրա տիրական ներկայությամբ արդեն՝ այլ կեցվածքի ժողովուրդ կլինենք և այլ հայրենիք:

«Չորրորդ իշխանություն», NN 166-172, 2002 թ.